10087198

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ


0010, ք.Երևան-10, Մ.Մկրտչյան 5.
Հեռ. 011-59-72-07. Ֆաքս 52-65-77
Էլ. փոստ: secretariat@mineconomy.am
Վեբ կայք: www.mineconomy.am


№ 01/10.2.1/9196-15
«19» 11 2015 թ

Ձեր № 15.1-07/000815-15
02.11.2015թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ԱՐԹՈՒՐ ՋԱՎԱԴՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Ջավադյան,

Ի պատասխան Ձեր 02.11.2015թ. № 15.1-07/000815-15 գրության՝ քննության առնելով «Բնակարանային հիփոթեքային կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքի նախագծի փաթեթը (այսուհետ՝ Նախագիծ)՝ հայտնում ենք, որ բանկերի կողմից հիփոթեքային վարկերի տրամադրման պայմանների և կարգի վերաբերյալ միասնական կանոնների սահմանումը, ընդհանուր առմամբ, անհրաժեշտ համարելով՝ սկզբունքային առարկություններ չունենք, սակայն, միաժամանակ, հայտնում ենք հետևյալը.

***Կրեդիտավորողի կողմից տեղեկատվական ամփոփագրում կրեդիտառուի՝ ապահովագրության, գնահատման, նոտարական և օժանդակ այլ ծառայությունների համար վճարելու մասին նշում կատարելու վերաբերյալ.***

Առաջարկում ենք հանել կրեդիտավորողի համար նշված պարտավորության ամրագրումը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ տվյալ ծառայությունները, ըստ էության, իր կողմից չեն մատուցվելու և վերջինս կարող է նույնիսկ տեղյակ չլինել դրանց մասին:

***Կրեդիտավորողի կողմից առնվազն տարին մեկ անգամ իր կողմից ընդունելի ապահովագրողների և գնահատողների ցանկը վերանայելու պարտավորության ամրագրման վերաբերյալ.***

Տարընթերցումներից խուսափելու նպատակով առաջարկում ենք Նախագծով սահմանել, թե ինչ ընթացակարգով պետք է վերանայումը իրականացվի, և ինչ հետևանքներ այն պետք է ունենա: Միաժամանակ, առաջարկում ենք նաև ամրագրել դրույթ

Կատարող՝ Լուսինե Վահրամյան
Գործարար միջավայրի բարելավման վարչություն
011 597133

բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից նշված ցանկերը պարտադիր հրապարակելու վերաբերյալ:

***Նախագծով ամրագրվող «Բնակարանային հիփոթեքային կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքի հիման վրա ընդունված իրավական այլ ակտերի պահանջները խախտելու համար սահմանվող պատասխանատվության վերաբերյալ.***

Առաջարկում ենք վերանայել նշված դրույթը ևս, քանի որ այն տարընթերցումների տեղիք կարող է տալ՝ որոշակիության բացակայության պատճառով: Ըստ էության, օրենքի նախագծով սահմանվում է պատասխանատվություն նշված օրենքի հիման վրա ապագայում ընդունվելիք, դեռևս գոյություն չունեցող իրավական այլ ակտերի պահանջները խախտելու համար: Ըստ այդմ, բարձրացված խնդրին լուծում տալու նպատակով առաջարկում ենք սահմանել «Բնակարանային հիփոթեքային կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքի հիման վրա ընդունվելիք այլ իրավական ակտերի ցանկը և դրանց ընդունման ժամանակացույցը՝ համապատասխանաբար սահմանելով պատասխանատվության կիրառման վերաբերյալ կարգավորումները Նախագծի անցումային դրույթներում կամ նշված օրենքի նախագծից հանել վերջինիս հիման վրա ապագայում ընդունվելիք այլ իրավական ակտերի խախտելու համար սահմանվող պատասխանատվությանը վերաբերող դրույթները:

Միաժամանակ, կից տրամադրվում են Նախագծի տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության, ինչպես նաև մրցակցության բնագավառներում կարգավորման ազդեցության գնահատման եզրակացությունները:

Առդիր՝ 3 էջ:

Հարգանքով՝

ԿԱՐԵՆ ՃՇՄԱՐԻՏՅԱՆ

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

**Մի շարք Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի մրցակցության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման**

«Բնակարանային հիփոթեքային կրեդիտավորման մասին», «Սպառողական կրեդիտավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին», «Ապահովված հիփոթեքային պարտատոմսերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Հրապարակային սակարկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերով (այսուհետ՝ Նախագծեր) նախատեսվում է կատարել մի շարք փոփոխություններ, մասնավորապես՝ սահմանվում է հիփոթեքային վարկերի տրամադրման պայմանների և կարգի վերաբերյալ միասնական կանոններ, վերացվում է գրավի պայմանագրով կամ գրավառուի և գրավատուի միջև կնքված համաձայնությամբ գրավ դրված գույքի իրացման (վաճառքի) այլ կարգի սահմանման համար նոտարական վավերացման պարտադիր պահանջը, ինչպես նաև ստեղծվում է առանձին ինտերնետային կայք, որտեղ կտեղադրվի վարկերի ապահովման միջոց հանդիսացող և իրացման ենթակա անշարժ գույքերի վերաբերյալ ամբողջական տեղեկատվությունը:

Նախագծերով կարգավորվող շրջանակներն առնչվում են բանկային ոլորտում մատուցվող ծառայությունների շուկայի հետ, սակայն Նախագծերի ընդունմամբ նշված շուկայում մրցակցային դաշտի վրա ազդեցություն լինել չի կարող:

Հիմք ընդունելով նախնական փուլի արդյունքները՝ կարգավորման ազդեցության գնահատման աշխատանքները դադարեցվել են՝ արձանագրելով Նախագծերի ընդունմամբ մրցակցության միջավայրի վրա *ազդեցություն չհայտնաբերվելու* եզրակացություն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

ԳԱՐԵԳԻՆ ՄԵԼՔՈՆՅԱՆ

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

**«Բնակարանային հիփոթեքային կրեդիտավորման մասին», «Սպառողական կրեդիտավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին», «Ապահովված հիփոթեքային պարտատոմսերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Հրապարակային սակարկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման**

«Բնակարանային հիփոթեքային կրեդիտավորման մասին», «Սպառողական կրեդիտավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին», «Ապահովված հիփոթեքային պարտատոմսերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Հրապարակային սակարկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի (այսուհետ՝ Նախագիծ)՝ գործարար և ներդրումային միջավայրի վրա կարգավորման ազդեցության գնահատման նպատակով իրականացվել են նախնական դիտարկումներ:

Գնահատման նախնական փուլում պարզ է դարձել, որ Նախագծով սահմանվող կարգավորումները լրացուցիչ ֆինանսական և վարչարարական ծախսեր կառաջացնեն

բնակարանային հիփոթեքային կրեդիտավորման շուկայում գործունեություն ծավալող բանկերի և ֆինանսական կազմակերպությունների համար:

***Սակայն, միաժամանակ, Նախագծով, առաջարկվում է նաև.***

- Սահմանել հիփոթեքային վարկերի տրամադրման պայմանների և կարգի վերաբերյալ միասնական կանոններ,
- վերացնել գրավի պայմանագրով կամ գրավառուի և գրավատուի միջև կնքված համաձայնությամբ գրավ դրված գույքի իրացման (վաճառքի) այլ կարգի սահմանման համար նոտարական վավերացման պարտադիր պահանջը,
- ստեղծել վարկերի ապահովման միջոց հանդիսացող և իրացման ենթակա անշարժ գույքերի վերաբերյալ առանձին ինտերնետային կայք, որտեղ կտեղադրվի վարկերի ապահովման միջոց հանդիսացող և իրացման ենթակա անշարժ գույքերի վերաբերյալ ամբողջական տեղեկատվությունը:

Ըստ այդմ, չնայած այն հանգամանքին, որ Նախագծով առաջարկվող կարգավորումները, մասնավորապես՝ տեղեկատվական ամփոփագրի, վերջինիս՝ կրեդիտավորողի կողմից իր ինտերնետային կայքում հրապարակման և ամրագրվող մի շարք այլ պարտադիր պահանջները կարող են հանգեցնել բանկերի և վարկային կազմակերպությունների համար որոշակի ֆինանսական և վարչարարական ծախսերի, այնուամենայնիվ՝ Նախագծի ընդունման արդյունքում, դրա կիրարկման դեպքում գործարար և ներդրումային միջավայրի վրա ***կնախատեսվի որոշակի դրական ազդեցություն***՝ *հաշվի առնելով այն հանգամանքը, որ առաջարկվող կարգավորումները կարող են հանգեցնել հիփոթեքային կրեդիտներ ստացող անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության մակարդակի բարձրացմանը՝ միաժամանակ նպաստելով ֆինանսական համակարգի նկատմամբ սպառողների վստահության ամրապնդմանը և գործընթացների թափանցիկությանը, ինչն էլ իր հերթին կնպաստի տնտեսության շինարարական հատվածի ակտիվացմանը:*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ

ՍԵՐԳԵՅ ԱՎԵՏԻՍՅԱՆ

